ԽԶՊ

Բովանդակությունը

1. Սյունիքի զինված պայքարը Հալիձորի ճակատամարտ
2. Հայ-ադրբեջանական պատերազմ /2022թ/
3. Համեմատություն տրված երկուսի միջև

1.Սյունիքի զինված պայքարը

18-րդ դարի սկզբներից Սյունիքում պատրաստվում էին ազատագրական շարժման: Սյունիքում բնակչությունը մաքուր հայկական չէր. լեռնային շրջաններում բնակություն էին հաստատել իսլամադավան ցեղեր, իսկ ազատագրական ուժերը սակավամարդ էին և ոչ համախմբված: Զանգեզուրում ազատագրական շարժումը կազմակերպելու հայ առևտրական Ստեփանոս Շահումյանը մեկնում է Թբիլիսի և բանակցում վրաց արքայորդի Շահնավազի հետ: Նրա խնդրանքով Քարթլի-Կախեթի թագավոր Վախթանգ VI-ը 1722 թվականին Սյունիք է ուղարկում մի քանի հայ զորավարներ:

30 հոգանոց զորականների ջոկատը, որոնց շարքում առավել հայտնին Դավիթ Բեկն էր, հաստատվեցին Շինուհայր ավանում և իրենց շուրջը համախմբեցին տեղի զինված ուժերը: Դավիթ Բեկի ստեղծում է ռազմական խորհուրդ, աչքի ընկած զորականներից Մխիթարին նշանակում զորքերի սպարապետ, իսկ Տեր-Ավետիսին, և ուրիշներին տալիս զորաջոկատի հրամանատարի կոչում:

Դավիթ Բեկը կարողանում է ստեղծել 2000-անոց կանոնավոր բանակ, իր մոտ հրավիրում Տաթևի վանքի հոգևոր առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսին, ով հավաստում է հոգևոր դասի աջակցությունը ազատագրական պայքարին:
Այնուհետև Դավիթ Բեկը հաղթական մարտեր է մղում թշնամու ՝դեմ, որոնց ելքը հօգուտ հայերի էր՝

Հայ բնակչությունը ոտքի է կանգնում նաև երբեմնի Սյունիքի թագավորության մայրաքաղաք Կապանում:



Հայկական ուժերի կենտրոնատեղի դարձավ Հալիձորի բերդը :1726 թվականին նրանք թուրքերը Նախիջևանի կողմից՝ Արաքս գետի հունով, ներխուժում են Սյունիք:Շրջակա մուսուլման տիրակալների հետ միացած՝ օսմանյան զորավարները փորձում են գրավել Սյունիքը և վերջ տալ հայկական իշխանությանը: Դավիթ Բեկն իր զորքերով ամրանում է Հալիձորի բերդում: Մարտի 24-ին ութ մելիքների ու հարյուրապետների ստորագրությամբ նամակ է ուղարկվում Ռուսաստան՝ օգնության խնդրանքով, որը, սակայն, անպատասխան է մնում:1727 թվականի փետրվարի 26-ին թուրքերը պաշարեցին Հալիձորը: Թուրքական զորքերը, աստիճաններ մոտեցնելով բերդի պարիսպներին, փորձեցին բարձրանալ պարիսպների վրա: Պաշարումը տևում է 6 օր: Վերջին օրը 26 պարսպակործան մեքենաների միջոցով թշնամին գրոհում է բերդը: Մարտի 4-ին զորքի հրամանատարությունը որոշում է անցնել վճռական գործողությունների. նրանք վճռում են ճեղքել պաշարումը, դուրս գալ շրջափակումից և անցնել հակահարձակման:



Պաշարված ջոկատները, աննկատ դուրս գալով բերդից, հարձակվեցին թշնամու վրա: Խուճապի մատնված թուրքական զորքերը, մեծ կորուստներ տալով, դիմեցին փախուստի: Հալիձորի հաղթանակն օսմանյան բանակների դեմ տարած հաղթանակներից ամենախոշորն ու նշանավորն էր[]:
Թուրքերը կորցրին 13000 զինվոր 143 մարտական դրոշ, հսկայական տեխնիկա ու ռազմավար:

Հայկական զորքերը ազատագրեցին Մեղրին և հակառակորդի դեմ լիակատար հաղթանակ տարան: Հալիձորի և Մեղրիի հաղթանակները ոգևորություն առաջացրեցին հայկական զորքերի մեջ[17]:

2.Հայ-ադրբեջանական պատերազմ

Հայ-ադրբեջանական պատերազմ, Հայաստանի արևելյան սահմանների նկատմամբ լայնամասշտաբ ռազմական գործողություն Ադրբեջանի զինված ուժերի կողմից, որը սկսել է 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ժամ 00:05-ին:Ռազմական գործողությունների հետևանքով հայկական կողմի մարդկային պաշտոնական կորուստներն են 207 զոհ, ավելի քան 20 գերևարված և 293 վիրավոր: Բացի այդ, հայկական կողմը կորցրել է տասնյակ հեկտարներով տարածք, ինչպես նաև բազմաթիվ բնակավայրերում բնակֆոնդի ու ենթակառուցվածքների ավերածություններ: Ռազմական գործողությունների հետևանքով ադրբեջանական կողմի մարդկային պաշտոնական կորուստներն են 79 զոհ և 282 վիրավոր:

Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել են ինտենսիվ կրակ վարել Գորիսի, Կապանի, Սոթքի, Ջերմուկի, Արտանիշի և Իշխանասարի ուղղությամբ հայկական դիրքերի և բնակավայրերի ուղղությամբ: Ադրբեջանական կողմը կիրառում է նաև ԱԹՍ-ներ, որոշ ուղղություններով ձեռնարկում է նաև դիրքային առաջխաղացման գործողություններ: Ադրբեջանական զինուժի կողմից գնդակոծվել է նաև Հայաստանի Գեղարքունիքի մարզի տարածքում Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ուժերի տեղակայման կետը, որի անձնակազմը շտապ լքել է տեղակայման վայրը: Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը հայտարարել է, որ ռազմական գործողությունների սկզբից Գեղարքունիքի ու Սյունիքի մարզերի տարբեր բնակավայրերից տարհանվել են առնվազն 2570 բնակիչ:

2022 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանը մի քանի հայց է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ Ադրբեջանի դեմ միջանկյալ միջոցների կիրառման պահանջով[Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հարցում է ուղարկել Ադրբեջանին ռազմագերիների մասով և ժամանակ տվել մինչև 2022 թվականի սեպտեմբերի 22-ը։

Այս պատերազմի արդյունքը հայ-ադրբեջանական հաշտության պայմանագիրն էր, որը սկսեց գործել սեպտեմբերի 14-ի 20:00-ից։

3.Համեմատություն տրված երկուսի միջև

Սյունիքի ազատագրական պայքարը և հայ-ադրբեջանական 2022թ-ի պատերազմը տեղի ունեցան տարբեր ժամանակաշրջաններում, որոնց արդյունքում ոչ միայն կարողացանք հարված հասցնել թշնամուն, այլև մենք ևս ունեցանք զոհեր:Երկուսն իրար հետ համեմատելով հանգում ենք այն բանին, որ դրանց միջև կան նմանություններ և տարբերություններ:

Այս ցույց տանք Վենի Դիագրամի միջոցով,


Սյունիքի զինված պայքար
Հայ-ադրբեջանական 2022թ պատերազմ
Պայքարն ընթանում էր սրերով, կացիններով, բաբաններով:
Հայերն ամրացան Հալիձորի բերդում:
Այս ժամանակ պետականություն չունեինք:
Կռվում էինք թուրքերի դեմ:
Հայերը հաղթանակ տարան:
Երկու դեպքում թշնամին ցանկանում էր գրավել Սյունիքը:
Պատերազմն ընթանում էր ժամանակակից տեխնիկայով:
Թշնամին հարձակվեց հանկարծակի, լայնամասշտաբ գրոհով:
Ունենք պետականություն:
Այս պատերազմում ունեինք կանոնավոր բանակ:
Կռվում էինք Ադրբեջանի դեմ:
Հայերը տարածքային կորուստներ ունեցան: